

ԱՍՏՈՒԱԾ ԿԲ ԼՍԵ ՄԵՐ
ԱՊՈԹՔՆԵՐԸ, ԵԹԷ ԻՐ ԿԱՄՔԻՆ
ՀԱՄԶԱՅՆ ԵՆ

1. Իրիկունք, առտուն ու կեսօրը պիտի գանգատիմ ու հառաջեմ: Անիկա պիտի լսէ իմ ձայնս (Սաղմոս 55:17):

2. Զիս պիտի փնտուի եւ գտնելիք, ձեր բոլոր սրտով պիտի խնդրելիք զիս ու ես ձեզի պիտի երեւիմ, կ'ըսէ Տէրը (Եր. 29:13):

3. Արդարները կ'աղաղակեն եւ Տէրը կը լսէ ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ գանոնք (Սաղմոս 34:17):


4. Համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ այն վստահութեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք կը լսէ մեզ (Ա. Յովհաննու 5:14):

5. Խնդրեցէ՞ք Աստուծմէն եւ պիտի տայ ձեզի, փնտուցէ՞ք եւ պիտի գտնելիք, բախեցէ՞ք եւ պիտի բացուի ձեզի (Մատքէնս 7:7):

6. Եթէ այդպէս է կը նշանակէ, թէ անոնք, որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, բանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացը նելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ Օրէնքը չի կրնար ընել մարդկային բնութեան տակ ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց՝ աշխարհ դրկելով իր Օրդին...

Շարունակել կարդալ (Հոռմայեցիներու 8): Ամէն օր կարդանք Աստուածաշունչը եւ ունենանք հոգեւոր սուլնդ:

ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒԹԻՒՆ ՀՎԱՏԱՏՈՒՄ

2.-Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ
ՀԱՄԱՑԱՑՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Պատարագիշ քահանան՝ փոխանորդաբար պատարագուող Քահանայապետին՝ ծածուկ կը կարդայ.- «Առնելով հացը իր սուրբ, աստուածային, աննահ, անարատ եւ արարչագործ ձեռքերով՝ օրինեց, շնորհակալութիւն յայտնեց, կտրեց, եւ իրեն հետ բազմած ընտրեալ եւ սուրբ աշակերտներուն տուալ ըսելով», եւ ապա բարձրածայն կ'եղանակէ.

«Առէք, կերէք, ասիկա իմ մարմինս է, որ ձեզի եւ շատերուն համար կը բաշխուի, մեղքերու քանութեան եւ բոլորթեան համար:

Յետոյ դարձեալ ծածուկ կը կարդայ. «Նոյնպէս բաժակը առնելով՝ օրինեց, շնորհակալութիւն յայտնեց, խմեց, եւ իրեն հետ բազմած ընտրեալ եւ սուրբ աշակերտներուն տուալ, ըսելով», եւ բարձրածայն կ'եղանակէ.- «Խմեցէք ասկէ բոլորդ: Ասիկա նոր ուխտի իմ արիւնս ...

Շարունակելի



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՒՇՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ
(Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 4 ՕԳՈՍՏՈՒ 2024

ԹԻՒ 31

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես 62.1-11: Բ. ՏԱ 2.1519: Յհ 6.39-47

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՈՍԻ ԱԵՏԱՐԱՆ

ԸՆ ՅՈՎՅԱՆՈՒ 6.39-47

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-

«Զիս որկող Հօրս կամքն է, որ չկորսնցնեմ ոչ իսկ մէկը բոլոր անոնցմ, որոնք ինծի տուալ, այլ՝ յարուցանեմ զայն վերջին օրը: Հօրս կամքը հետեւեալն է, ով որ տեսնէ Որդին եւ հաւատայ անոր՝ յախտեանական կեանք կ'ունենայ, եւ ես պիտի հարուցանեմ զայն վերջին օրը»:

Հրեաները սկսան տրտնջալ իրեն դէմ, որովհետեւ ըսած էր, թէ.- «Ես եմ երկնքէն իջած հացը», եւ կը հարցնէին. «Այս մարդը Յովսէփի որդին Յիսուսը չէ», որուն հայրն ու մայրը կը ճանչնանք: Ինչպէ՞ս ուրեմն կ'ըսէ՝ «Ես երկինքէն իջայ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կը բաւէ դուք ձեզի քրքմնջէք: Ուեւ մէկը չի կրնար ինծի զալ, եթէ զիս որկող Հայրը զայն ինծի չբերէ, եւ ես պիտի յարուցանեմ զայն վերջին օրը: Մարգարեւորիններուն մէջ գրուած է. “Ամէն մարդ Աստուծմէ սորված պիտի ըլլայ”»: Ով, որ Հօրմէս կը լսէ եւ իրմէ կը սորվի՝ ինծի կուգայ: Ոչ ոք Հայրը տեսած է, բացի անկէ, որ Աստուծմէ է, որովհետեւ միայն անիկա տեսած է Հայրը: Ու ես կ'ըսեմ ձեզի. Ով որ ինծի հաւատայ՝ յախտենական կեանքը կ'ընդունի»:

Որդին տեսնելու միակ տեղը Աստուծաշունչ մատեանն է, ուր կը կարդանք Տիրոջ մասին, կը ծանօթանանք անոր, ինչպէս նաև կեանքի իր տուած ցուցմունքները կը վերածենք գործնական միջոցին մեր կեանքին մէջ: Հետեւաբար մենք այսօր հրաւիրուած ենք ապրելու հաւատքը Աստուծաշունչ մատեանի ճամբռվ եւ զօրութեամբ:

ԱՊՐԻՆՉ ՄԵՐ ԿԵԱՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԶՈՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԻՍԱԱՍՈՒԹԵԱՄԲ

Ա. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒՃԱԲԱՆ

Ինքնամփոփ եւ աղօթասէր բնութիւն ունեցող անձ մը եղած է Գրիգոր Աստուածաբան: Հայրը եպիսկոպոս էր Նազիանց քաղաքին, ուր ծնած է ինք 329 թուականին եւ որով, նաեւ կոչուած է Նազիանցացի:

Գրիգոր երիտասարդ տարիքէն ինքին կը նուիրէ նգնութեան: Սակայն հօրը պնդումով կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի 362 թուականին եւ հօրը օգնական կը նշանակուի: Տասը տարի ետք կը ձեռնադրուի եպիսկոպոս Սասիմա փոքր քաղաքին արռոին, որ սակայն իր վրայ ծանրացած հօրը աշխատանքներուն պատճառով առիթը չունենար երթալու:

Հօրը մահէն ետք՝ 374-ին, կը քաշուի Կիլիկիա, ուր շրջան մը կը նգնի եւ 379 կը հրաւիրուի Պոլիս եւ իր քարոզներով մեծապէս օգտակար կը դառնայ Նիկիական հանգանակի յաղթանակին: 381-ին կ'ընտրուի Պատրիարք Կ. Պոլսոյ, եւ Անտիոքի Պատրիարք Մելիտոսի մահէն ետք, կը նախագահէ Կ. Պոլսոյ Տիեզերական երկրորդ ժողովին:

Ապա վարչական աշխատանքները իր բնութեան անյարիր գտնելով, կը վերադառնայ իր ծննդավայրը եւ իր հօրը կալուածին մէջ կ'անցընէ կեանքին վերջին ժամանակները եւ կը վախճանի 389 թուականին:

Ս. Գրիգոր Աստուածաբան ճգած է քազմաթիւ գործեր, որոնցմով շահած է «Աստուածաբան»-ի տիտղոսը: Ունի քազմաթիւ քարոզներ եւ հոգեւոր քանաստեղութիւններ, որոնցմէ շատեր քարգմանուած են հայերէնի:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

**Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ
«ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ»-
Ը, ՈՐ ՔԱՀԱՆԱ ՊԱՏԱՐԱԳԻ
ԸՆԹԱՑՔԻՆ ՅԱԶԱԽ ԿԸ ԿՐՎՆԵ**

Հետեւեալ իմաստը ունի: Նախ՝ Քրիստոս իր ծնունդով երկինքի եւ երկրի միջեւ խաղաղութիւն հաստատեց, ինչպէս հրեշտակները երգեցին: Ապա՝ մկրտութենէն ետք աշխարհին արքայութեան Աւետարանը սկսաւ քարոզել եւ Աստուծոյ հետ հաշտութեան ճանապարհը սկսաւ ուսուցանել: Ի վերջոյ, մատնութեան երեկոյին, առաքեալներուն աւանդեց ըստով. «Խաղաղութիւն կը քողում ձեզի: Իմ խաղաղութիւնս է, որ կու տամ ձեզի» (Յհ. 14.27), եւ քահանան Քրիստոսէն առնելով խաղաղութիւնը, ժողովուրդին կու տայ:

ՆԵՐՈՒԹԵՆՔ ԵՏՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂՋԹՔ

Ով Տէր, քու սրտմտութիւնովդ զիս մի՛ յանդիմաներ եւ քու բարկութիւնովդ զիս մի՛ խրատեր:

Ով Տէր, ողորմէ՛ ինձի, վասն զի տկար եմ ես: Զիս բժշկէ, ո՛վ Տէր, վասն զի սուկորներս կը սարսափին: Իմ անձս ալ խիստ սարսափեցաւ, եւ դուն, ո՛վ Տէր, մինչեւ ե՞րբ:

Դարձի՛ր, ո՛վ Տէր, փրկէ՛ իմ անձս, Քու ողորմութեանդ համար զիս ազատէ: Վասն զի մահուան մէջ քեզ յիշատակել չկայ: Գերեզմանին մէջ ո՞վ քեզի շնորհակալութիւն պիտի յայտնէ: Հառաչանք ընելէ յոգնեցայ: Ամէն գիշեր կը լուամ իմ անկողինս, արցունքներով կը թրչեմ իմ մահինս: Իմ աչքս մաշեցաւ տրտմութենէն:

ՀՈԳԵՒՈՐ
ԴԱՍ ԳԱՍ

ՄԱՐԻԱՄ ՄԱՅՐԻ Է ԲՈԼՈՐԻՆ՝ ԵՐԿԻՆՔԻ ԵՐ ԵՐԿՐԻ

Երանելի է Աստուածամայրը, որովհետեւ ան մաս կազմեց ամենասուրբ Երրորդութեան Ընտանիքին: Ան եղաւ դուստրը Հայր Աստուծոյ, մայրը Որդի Աստուծոյ եւ Հարսը Սուրբ Հոգի Աստուծոյ: Երանելի է սուրբ Կոյսը, որովհետեւ ան եղաւ մայրը՝ Փրկիչին ու փրկուածներուն, մայրը՝ սրբութեան, սուրբերուն եւ սրբութեան ձգտողներուն, մայրը՝ քերովքներուն եւ սերովքներուն, մայրը՝ հրեշտակապետներուն, հրեշտակներուն եւ հրեշտականալ ուզողներուն, մայրը՝ պատմութեան բոլոր արդարներուն եւ նահատակներուն, մայրը՝ մարգարէներուն եւ առաքեալներուն, մայրը՝ Յաղթական եւ Զինուրագրեալ Եկեղեցիներուն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Ան նաեւ մեր մայրն է, եթէ երբեք Քրիստոսով հաշտուած ենք մեր Երկնաւոր Հօր հետ: Մայրն է բոլոր տառապեալներուն, նեղեալներուն, որբերուն եւ որբեւայրիներուն: Եթէ ունիս նեղութիւններ, դիր զանոնք հաւատքով սուրբ Մօրդ ոտքին տակ եւ վստահ եղիր, որ ան պիտի հոգայ:

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ ԿՌՈՒՁԵ...

ԵՐԲ ԱՎՏՈՒԾՈՅ ՄԵՐԸ ԿԸ ՓՆՏՈԵՍ,

ԿԱՐԿՎ ՍԱՂՄՈՍ 33

Ո՞վ արդարներ, Տիրոջմով ցնծացեք, ուղիղ վարքով ապրողներուն կը վայելէ օրինութիւն երգել: Քնարով գոհութիւն յայտնեցեք Տիրոջ, տանալար տափառ ներքող երգեցեք անոր: Նոր երգ երգեցեք Տիրոջ, քայցրութեան ցնծալից հնչեցուցեք ձեր նուագարանները: Որովհետեւ Տիրոջ խօսքը անդառնալի է, անոր բոլոր գործերը վստահելի են: Անիկա արդարութիւնն ու իրաւունքը կը սիրէ, աշխարհը Տիրոջ սիրովը լեցուն է: Տիրոջ խօսքով ստեղծուեցաւ երկինքը, անոր շունչով ստեղծուեցան երկնային բոլոր մարմինները: Բոլոր ծովերը կը մէկտեղէ աւագի պէս, ովկիանոսները՝ ջրամբարներու պէս: Ամբողջ աշխարհը թող Տիրոջմէ վախնայ, թող աշխարհի բնակիչները պատկառին անկէ, որովհետեւ ան ըսաւ՝ եւ աշխարհը գոյացաւ, հրամայեց՝ եւ անիկա հաստատուեցաւ: Տէրը կը խափանէ ազգերուն խորհուրդները, ձախողութեան կը մատնէ ժողովներուն ծրագիրները, մինչդեռ Տիրոջ խորհուրդը բոլոր ժամանակներուն համար է, անոր ծրագիրները՝ բոլոր սերունդներուն համար:

ՄԻՇՍ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԴԱՆՔ